

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

### ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 58-րդ կետով և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1-րդ և 2.2-րդ կետերով, Ինստիտուտի հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ Ինստիտուտի ռեկտորի թափուր պաշտոնի համար:

Ինստիտուտի ռեկտորի պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս այն քաղաքացին, ով ունի գիտական աստիճան և գիտական կոչում:

Ռեկտորի պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

1. Ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվողի գրավոր համաձայնությունը
2. Լուսանկար 3\*4 չափի
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթը,
4. Ինքնակենսագրությունը (CV)
5. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը և գիտական կոչումը հավաստող վկայականների պատճենները
6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
7. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
8. Հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը,
9. Բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),
10. Հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Ռեկտորի պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում դիմումատուի կողմից ստորագրված վիճակում Խորհրդի քարտուղարին փոստային առաքման միջոցով կամ առձեռն եղանակով:

Փաստաթղթերը կարող են ուղարկվել նաև էլեկտրոնային տարբերակով [info@sportedu.am](mailto:info@sportedu.am) հասցեով:

Փաստաթղթերը կարող են ներկայացվել սույն թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 25-ը՝ ժամը 17:00 (Ինստիտուտի մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 0070):

Մրցույթը տեղի կունենա Ինստիտուտի վարչական շենքում, 2021 թվականի հունվարի 11-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Ինստիտուտ՝ +37410553310 հեռախոսահամարով: